

յետկոյս գրոցն . Արքեան , արքեան .
անուան , անուան . Վերջնագոյն ճանաչ-
ողոյն՝ որ ճանաչ ալայ վերադառնի , ծածկեցեալ
հերոս հարձակոսութեամբ՝ պահպանութեան ստի-
անանցն ընդդէմ իրացն այնոցիկ , որք 'ի վե-
րոսոս ներանկանիլ հարեն : 'Եւ այսմ սակայն
գիտելի է զմոլորութեան գրչայ , որք փոխա-
նայ գրելոյ արքեան՝ անհրաժեշտ գրե-
ցին արքեան , որ է Խո ընդդէմ արհեստի
հերթողանի :

{ Եւ այս ծայր աղաւաղութեան հա-
սեալ էր հայկազնեանս բարբառ 'ի ժա-
մանակի՝ յորժամ սկսաւ Սիսիթար հան-
դերձ իւրովքն նորոգել զայն , և 'ի նա-
խատիպ գեղեցկութիւնն դարձուցա-
նել : 'Այլ յոյժ գծուարին է բժշկել
զվերս առանց սպեաց , և դուն ուրեք
'ի բորոյ և 'ի ծաղկոյ անտխեղծ մնան
դէմք : 'Այսպիսի սպիք ոչ միայն 'ի լա-
տինականին նիւթական թարգմանու-
թենէ , այլ և 'ի յունականէն իսկ դեռ
ևս մնան 'ի մերում լեզուիս , որ խորա-
զնին աչաց և եթ գան 'ի տեսիլ . և ներ-
հուն հմտութեան պէտք են առ 'ի զա-
նազանելոյ զհայկաբանութիւն 'ի հել-
լենաբանութենէ և 'ի լատինաբանու-
թենէ , և թէ որ եղանակ բանից ըն-
կալեալ 'ի նոցանէ չստնանիցէ մերումս
բարբառոյ : { Եւ ճախ ընթերցումն քա-
ջաց մատենադրացն մերոց՝ վեհագոյն
վարժապետ լիցի մեծիս այսմիկ և դը-
ժուարին կրթութեան :

*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՏԱՐՈՒԹԻՒՆ

կար և անոր գործածութեանցը վրայ :

Եւ թէ այնպիսի սննդարար ու օգ-
տակար գոյացութիւն մըն է , որ ամէն
տեղ մարդուս առօրեայ պիտոյիցը հա-
մար ասկէց աւելի գործածական բան
չկայ , մանաւանդ որ իր կերպ կերպ վի-
ճակի փոփոխութեամբը՝ շատ տեսակ
գործածութեանց մէջ կը մտնէ . անոր

համար երկրագործական շահավաճա-
ռին մէջ մէկ մեծ ճիւղ մըն է կաթի
առուտուրը , որով երկրագործութեան
արդար ու միանգամայն առատ վաստա-
կովն իրեն շահին դուռ բացողը՝ եթէ
այս մասին ալ ըստ օրինի մտադիր ըլլայ ,
անտարակոյս շատ աւելի արգասաւոր
կ'ըլլայ իր աշխատութիւնը : 'Այդ մենք
ալ ուզելով մեր կողմանէ դիւրութիւն
մը ընծայել մեր այն ազգայնոց , որ մաւ-
նաւոր կերպով սէր ու փոյթ ունին եր-
կրագործութեան օգտակարարութեան
և միանգամայն անոր կանոնաւոր գոր-
ծադրութեանը կը փափաքին ու կը ջա-
նան , կարգաւ դիւրիմաց և քիչ մը ըն-
դարձակ ոճով հետ զհետէ կը խօսինք
ընդհանուր կաթի և կաթնեղէն գոյա-
ցութեանց վրայ՝ իրեք մաս բաժնելով
մեր խօսակցութիւնը , առջինին մէջ
պարզ կաթի վրայ խօսելով , երկրորդին
մէջ կարագ շինելու կերպին վրայ , և
երրորդին մէջ պանրոյ վրայ :

Ընդհանուր գիտելիք :

Եւ թէ կաթնէն վերջը մասնաւոր տեղ
մը կը դնեն , որ Կաթնաբան կ'ըսուի , ու
հոն կը պահեն՝ մինչև որ հարկ ըլլայ
իրըն պարզ կաթ գործածել , և կամ
թէ որ կարագ ու պանիր շինելու դիտա-
ւորութեամբ դրուած է՝ մինչև որ մա-
սունքը իրարմէ բաժնուին :

Եւ որովհետեւ կաթը այլ և այլ կերպ
փոխուելով՝ այլ և այլ գոյացութիւն կը
դառնայ , և ըստ այնմ ալ աժէքը կը փո-
խուի , և այս աժէքն ալ միշտ ու ամէն
տեղ նոյն չէ , հապա ըստ տեղւոյն ու
ըստ ժամանակին փոփոխական է , ա-
նոր համար երկրագործը պիտի նայի որ
ինչ կերպով իրեն աւելի շահաւոր կ'իյ-
նայ , արդեօք պարզ կաթը ծախելով՝ չէ
նէ կարագ ու պանիր շինելով : 'Նոնք ,
որ քաղաքներու քով տեղ կը բնակին՝
շատ շահաւոր կ'ըլլեն , թէ որ պարզ
կաթ և կամ թէ կաթին երեսէն ժող-
վուած պարարտ սերը ծախելու ըլլան .
իսկ անոնք , որ քաղաքներէ աւելի
հեռու տեղ կը բնակին և շաբթուն

մէջ մէկ կամ երկու անգամէն աւելի քաղաք չեն կրնար երթալ, բնական է որ իրենց կաթը կարագ կամ թարմ պանիր շինելով՝ աւելի կը շահին . և վերջապէս անոնք, որ հողագործութեան պարապելով՝ խիստ հեռու կը գտնուին քաղաքներէ, աւաններէ և ուրիշ բնակութեան տեղումներէ, և խիստ քիչ անգամ քաղաքները կ'իջնան, աւելի վաստակաւոր կ'ելեն՝ իրենց կաթը աղած կարագ ու պանիր շինելով, որով հեռու տեղումնք ալ կրնան խաւրովի առանց ճամբուն երկայնութենէն փաստելու :

Ընդհանուր կաթին ըստ այս գըլ խաւոր իրէք կերպ գործածութեանցը իրէք տեսակ կաթնարան կայ . Ա . կաթնարան պարզ կաթի . Բ . կաթնարան կարագի . Գ . կաթնարան պանրոյ : Բայց այս բաժանմունքը ըստ կամէ . որովհետեւ շատ անգամ մի և նոյն կաթնարանի մէջ, ուր որ պարզ կաթ կը պահեն, կարագ ու պանիր ալ կը շինեն . սակայն այս բաժանմունքը այդ այլ և այլ ընելու գործողութեանցդ աւելի դիւրութիւն կու տայ :

Մ Ա Ս Ն Ա .

Պարզ կար . — և Պարզ կարի Կար-նարան :

Ա . Կարնարանին շէնքը :

Պարզ կաթի կաթնարանը կը ծառայէ կաթը միայն պահելու՝ այնչափ ժամանակ, որ հարկաւոր է կաթին սերը երեսէն ժողվելու և կամ օր ըստ օրէ ծախու հանելու և կամ գործածելու համար : Ըստ վախճանիս համար սահմանեալ կաթնարանի մը շէնքը ամենապարզ է, և շատ անգամ պարզ խուց մը, կամ նկուղ մը և կամ զով տեղ մըն է : Բայց մենք հոստեղս մանրամասնաբար կը ստորադրենք կանոնաւորեալ մեծկակ կաթնարանի մը շինութեանը համար հարկաւոր եղած գիտելիքները, այնպէս որ իւրաքանչիւր մարդ այս ստորադրութիւնը միջին կա-

նոն մը բռնելով՝ իր պիտոյիցը չափուն համեմատ կարենայ յարմարցնել : կաթնարանի մը շինութեան ատեն շատ դիտելու բաներ կան, որոնք խիստ մեծ ազդեցութիւն ունին կաթին պահպանութեանն ու լաւութեանը վրայ, որով նաև անկէջ ունենալու վաստակիդ :

Վեռ շինութեան ձեռք չզարկած՝ առջի դիտելու բանն է կաթնարանին պատշաճ դիրքը . որովհետեւ թէ որ գէշ դրքի վրայ շինուած ըլլայ, անհանգիստ տեղ մը, այնպէս որ թէ մարդիկ և թէ կենդանիք շատ դժուարաւ կարենան հոն երթալ, բնակութեան տեղէն խիստ հեռու և վատաւողջ կողմ մը, ոչ միայն շատ ժամանակ կը կորսուի աշխատութեանց համար, հապա նաև ինչպէս որ պէտք է գործքդ առաջ չերթար և կաթդ ալ հասարակ աստիճանի կ'ըլլայ :

Երկրորդ դիտելու բանն է՝ որ կաթնարանդ աւելի խաղաղ ու շուք տեղ շինուած ըլլայ, պզտիկ գետակի մը, առուակի, աղբեր մը, կամ սառնատան և կամ ջրհորի մը քով : Ընդհանրապէս պէտք է դիտել որ կաթնարանին մօտերը այնպիսի նիւթեր չգտնուին, որ քարշահոտ և վատաւողջ արտաշնչութիւն ունենան : Ընդհանուր լեռնոտ երկիրներու մէջ, ինչպէս Օւիցերի և Վալդիոյ արևելեան գաւառները՝ երբեմն ժայռերու մէջ կաթնարանին կը փորեն, միայն թէ չորկէկ ըլլայ նոյն տեղը : Վերջապէս երբ այս ամէն պայմանները անկարելի ըլլայ մէկտեղ յարմարցնել, այն ատենը բնակարանին մէկ մաքուր ու զատ կողմը բաժնելու ու կաթնարանի վերածելու է :

կաթնարանի մը համար լաւագոյն կողմը հիւսիսային դիրքն է, բայց նաև հիւսիսային արևմտեան դիրքն ալ նոյնպէս լաւ է . կամ գէթ կաթնարանիդ մէկ երեսը դէպ 'ի այս կողմերէն մէկուն նայի, ու քանի մը պատուհաններ ունենայ, որ մերթ ընդ մերթ բանալով՝ այն ուղղութեամբ կաթնարանիդ մէջ քամի բանի . իսկ հարաւային դին

որչափ որ կարելի է՝ չուք ըլլայ . միով բանիւ՝ ամենահարկաւոր դիտելու բանն այս պիտի ըլլայ , որ կաթնարանդ չոր ու լաւ հովահարած ըլլայ , և ամառուան սաստիկ տաքերէն և ձմեռուան ցուրտ ու բուռն հովերէն պաշտպանեալ ըլլայ :

Իսկ կաթնարանին ձեւը ամենապարզ կ'ըլլայ . երկայնկեկ քառանկիւնի սրահ մը , որ մէկ կողմէն դուռ ունի և դիմացէ դիմաց մէյմէկ ալ պատուհան՝ օդը միշտ փոխելու համար : Եւս սրահին քովը սովորաբար ուրիշ մէկ չափաւոր մեծութեամբ շէնք մըն ալ կ'ըլլայ , ուր որ կաթնարանին ու մաքրելու վերաբերեալ գործողութեանց մեծ մասը կ'ընեն և կ'ըսուի շաւարան կամ նաև ջեւարան :

Կաթնարանին մեծութիւնը՝ հոն դնելու կաթիդ քանակութենէն կը կախուի . բայց այսու ամենայնիւ միշտ լաւ է որ մեծկակ ըլլայ , ինչպէս որ հռոմէական ընդհանրապէս ընդարձակ են կաթնարանները . ասով դիւրին կ'ըլլայ մէջի օդը փոխել , ու լաւ կերպով չորցընել . բայց ասկից օդը աւելի մաքուր ու աւողջ մնալով՝ կաթին աւրուելու վտանգ չմնար , և հարկ ալ չըլլար կաթին ամանները վրայէ վրայ դնել , որ այնչափ լաւ չէ կաթին համար : Սրաշալ սնտեսականը 40 կովու կաթին համար՝ 20 ոտք երկայն ու 16 ոտք լայն պէտք է ըլլայ , կ'ըսէ , կաթնարանը . իսկ 100 կովու կաթին համար՝ բաւական կը սեպէ 40 ոտք երկայնութեամբ ու 30 ոտք լայնութեամբ կաթնարան մը : Կան երկիրներ՝ ուր կաթնարանը կ'առնեն շատ մը մանր իրարու քով շինուած խցերով կը յարմարցընեն . իսկ ուրիշ տեղուանք ալ , ինչպէս Սպանիոյ քանի մը գաւառներուն մէջ , 5 ոտքէն աւելի բարձր չեն շիներ : Եւս այս ետքի երկու կերպն ալ ընտրելի չեն , որովհետեւ առաջինը կաթին աւրուելուն պատճառ կրնայ ըլլալ , և երկրորդը՝ մէջն աշխատելու ատենդ դժուարութիւն կու տայ , և երկուքն ալ մէկտեղ թող չեն տար որ կաթնարանին մէջ զուգախառնութեան հաստատուն ու հաւատար աստիճան մը պահուի :

Իսկ կաթնարան մը ըլլալու համար հարկաւոր է հողին երեսէն ցած քիչ մը խորկեկ շինել , որպէս զի ամառը ջովկեկ ըլլայ ու ձմեռը տաքուկ , և այդ բռնելու խորութիւնդ հողին տեսակէն կը կախուի : Եւս ու աւագուտ հողի մէջ՝ երբեմն կաթնարանը ամբողջ հողին երեսէն վար կը շինեն , թէպէտ և այս կերպս քանի մը դժուարութիւն կու տայ հովահարելու , ևս առաւել թափուած ջրերը վազցընելու համար . իսկ ընդհանրապէս խոնաւ ու ջուր մզող հողի մէջ՝ կաթնարանը մասամբ պէտք է հողէն վեր բարձրացընել , որպէս զի սաստիկ խոնաւութիւն չընդունի :

Կաթնարանի մը լաւագոյն ձեւն է՝ կամարաշէն սրահ մը , ծածքը աղիւսով կամ քարով գոցուած , ու 4 , 5 մեդր բարձրութիւն բաւական է իրեն : Կամարաշէնն ու չորս կողմի պատերը կրաքարով և կամ լաւ թրծած աղիւսով շինելու է և դիտելու ալ որ ծեփը լաւ մածուցիկ ըլլայ , որպէս զի պատերուն վրայ ծակ տիք մնալով՝ կաթնարանին մէջ չուզած ատենդ ալ օդ չմտնէ . թէ որ կաթնարանիդ շէնքին տեղը խոնաւ ըլլայ , շաղախի տեղ մարած կիր գործածելու է : Պատերն ու կամարաշէնը այս ըսած կերպով շինելէն ետքը՝ ներսի կողմէն ալ գաճով լաւ մը պէտք է ծեփել և կամ ուրիշ ու իցէ լաւ մածուցիկ նիւթ է շաղախ մը , և ետքը ասոր վրայ ալ կիր տուր : Իսկ ճիս կաթնարաններուն մէջ այս պատերը հողէն վեր մարմարիւնով պատած են . բայց որովհետեւ ասիկայ շատ սուղի կը նստի , ասոր տեղը ճերմակ ապիկած խեցեղէն աղիւններով կաթնարանիդ պատերը կրնաս ծածկել , որ թէ տեսքին կողմանէ աղուոր կ'ըլլայ և թէ ծախքն ալ գրեթէ ոչինչ է , մանաւանդ օգտակարութեանը նայելով :

Իսկ յատակը , որ քիչ մը զառ 'ի վայր պէտք է ըլլայ՝ որպէս զի վազած ջուրը դիւրութեամբ երթայ , կարծր ծեփով մը կրնայ շինուիլ , կամ աղիւսով , կամ սալաքարով , և կամ հասարակ մարմարիւնով , որ ամենէն լաւն է և հողան .

տա ալ այս կերպովս կը շինեն . և ասոնց մէ որն ալ ուզես գործածել, պէտք է որ նախ շաղախ տարածես գետինը , և ետքը ուզածդ՝ թէ աղիւս եղեր է և թէ քար՝ կարգաւ քովէ քով շարես և իրարու միանալու գծերը Բողոքականայի շաղախով ծեփես : Այս սալայատակին վրայ պէտք է ագուգաներ յարմարցնել , որ կաթնարանին մէջ գործածուած թափելու ջրերը անոնց մէջէն անցնելով կաթնարանէն դուրս վազեն . բայց ասոր ալ հոգ տանելու է՝ որ այս ագուգաներուն բերանը գործածութեան ժամանակէն դուրս միշտ ամրախից՝ փակես : — Տալասիկ բոլոր այս ոճիս վրայ շինուած են Վաղղիոյ Ստորին-Սեն գաւառին կաթնարանները , որ իրենց կարագին աղնուութեանը կողմանէ շատ անուանի են . ասոնք գետնի տակ փորուած կամարակապ շէնքեր են՝ զով , չոր ու խորունկ , ուր որ դրուած կաթնեղէնը լաւ կերպով պաշտպանուած է զուգախառնութեան յանկարծակի փոփոխութիւններէն և սաստիկ տաքութեան ու ցրտութեան և բուռն քամիներու ազդեցութենէն :

Կաթնարանի մը համար բաւական է դուռ մը , որ որչափ կարելի է հիւսիսային դին բացուած ըլլայ կամ գէթ հիւսիսային արևելեան կամ հիւսիսային արևմտեան դին , և երկու պատուհան՝ կէս քառակուսի մեղր մեծութեամբ , որ կամ դրան երկու կողմէն և կամ շէնքին երկու իրարու նայող կողմերէն կրնան բացուիլ : Ասոնք կաթնարանին օդը փոխելու ու չորցնելու կը ծառայեն , և միանգամայն հարկաւոր եղած լոյսը կու տան ներսի աշխատութեանց ատեն :

Երբոր կաթնարանդ գետնափոր չկարենաս շինել , այն ատեն այս հետեւեալ կերպը բանեցուր . նախ չորկեկ երկիր մը ընտրէ ու հոն կաթնարանին շէնքը շինէ . ետքը այս շինած կաթնարանիդ չորս կողմը չափաւոր հեռաւորութեամբ տեղ ձգէ , և ձգած տեղէդ

անդին նորէն քարուկիր կամ աղիւսէ պատ բարձրացուր , այնպէս որ իբրեւ թէ կաթնարանին պարիսպն ըլլար , ու այս շրջապատին պատերը դեռ բարձրացնելով դէպ ՚ի կաթնարանին յարկին վրայ՝ ուրիշ յարկ մը ձևացնելով գոցէ , այնպէս որ կաթնարանդ իբրեւ թէ պատենի մէջ ըլլար : Այս շրջապատին ու կաթնարանին և երկու յարկերուն պատերը՝ երկու կողմէն ալ , այսինքն թէ դրսէն և թէ ներսէն լաւ մը ծեփէ , իսկ ներսի կողմէն երկու յարկերուն ձեղուններն ալ գաճէ շաղախով : Այս երկու յարկերուն վրայ՝ երդիք՝ մը բարձրացուր . ասիկայ փեղկ մըն ալ ունենայ , որ ուզած ատենդ բանալով՝ կաթնարանդ հովահարես , և ուզած ատենդ գոցելով՝ արտաքին օդին հաղորդակցութիւնը կաթնարանիդ մէջէն բոլորովին կտրես : Եւ կաթնարանին յատակը աւելի բարձր պէտք է ըլլայ՝ քան թէ իրեն ու արտաքին շրջապատ շէնքին մէջտեղն եղած միջոցին յատակը : Կաթնարանն որ այսպէս ուրիշ շէնքի մը մէջ առնելու է ըսինք՝ հանդերձ մէջերնին չափաւոր մեծութեամբ անցք կամ միջոց մը պարպ թողլով , այս վախճանաւ է՝ որ ձմեռուան ու ամառուան սաստիկ ցրտին ու սաստիկ տաքին ազդեցութենէն պաշտպանեալ մնայ կաթնարանդ : Այս կերպով շինելէն վերջը՝ յայտնի է որ ըստ կանոնի նորէն հիւսիսային դիէն կը բանաս դուռը , և շէնքին երեսը քանի մը տեղէն ապակափեղկ պատուհաններ ալ կը շինես՝ կաթնարանիդ օդը հարկաւոր եղած ատեն փոխելու համար , և հարկաւ կաթնարանին այս պատուհաններուն դէմ ընդդէմ պատուհաններ կը բանաս դիմացի եղած արտաքին շրջապատ շէնքին վրայ , որպէս զի արտաքին օդը կարենայ կաթնարանին մէջ մըտնել . բաց ասոնցմէ՝ երկու դռնակ ալ բաց արտաքին շրջապատ շէնքին վրայ միայն՝ առանց կաթնարանին հետ հաղորդելու , որպէս զի թէ որ հարկ ըլլայ

կաթնարանին զուգախառնութեան աստիճանը քիչ մը փոփոխել, այս դռնակները բանալով՝ կարենաս կաթնարանին ու շրջապատին մէջտեղի եղած միջոցին մէջ բանուկ քամի մտցնել, որովարտաքին ազդեցութեամբ մը միայն՝ կաթնարանիդ զուգախառնութեան աստիճանին վրայ ուղած թեթև փոփոխութիւնդ կարենաս տալ :

Իսկ բուն կաթնարանին բոլորտիքն ալ հարկաւոր է քարէ լայն ջրանցք մը շինել՝ մէջը պաղ ջրով, որպէս զի ըստ պիտոյից կաթդ կարենաս պաղեցնել՝ կաթին ամանները մէջը դնելով . և թէ կաթնարանիդ ու թէ կաթնարանէն դուրս՝ այն պարապ միջոցին մէջ, որ կաթնարանէն ու շրջապատէն կը մնայ, խել մը երկայն փայտէ յենարաններ շարէ՝ կաթին ամանները վրան դնելու համար : Իսկ լաւաշարան ըստածը, ինչպէս որ վերն ալ ըսինք, այդ շինութեան կերպիդ մէջ նոյնպէս կաթնարանին քով շինէ, բայց այն կերպով՝ որ դրսէն լուացարանը մտնելու համար հարկ չըլլայ կաթնարանին դռնէն ներս մտնել, հապա ընդհակառակն դրսէն առանձին դուռ մը ունենայ, և ներսէն ալ կաթնարանին հետ հաղորդուած դուռ մը : Եւս ներքին դուռը ձմեռ ու ամառ ատեն շատ հարկաւոր կ'ըլլայ . որովհետեւ սաստիկ ցրտին ու սաստիկ տաքին պէտք չէ կաթնարանին արտաքին դուռը գործածել, հապա լուացարանին դրսի դուռնէն ներս մտնելու և վերջը անիկայ լաւ մը գոցելու է, ու ետքը մէջտեղի ներքին հաղորդակցութեան դռնէն ներս կաթնարանը մտնելու է . իսկ ուրիշ ատեն՝ երբ կաթնարան մտնել ելլել հարկ չկայ, աղէկ մտադրութիւն դնելու է որ այս հաղորդակցութեան դուռը լաւ գոց մնայ : Եւս կաթնարանին մէկ անկիւնը վառարան մը պէտք է շինես՝ վարան թափծու կաթսայով մը, կաթին ալ մանները լուալու համար, և ուրիշ մէկ անկիւն մըն ալ աղտոտ ջրերը թափելու համար պզտիկ ջրանցիկ աւազան մը :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փիղ :

Փիղը չորքոտանեաց մէջ քան զամենը հսկայագոյնն է, և իր ամբողջութեան տեսքով՝ մասնաւոր դաս մը կը կայացնէ, որով նաև բարուց կողմանէ ալ ուրիշ կենդանեաց հետ ամենևին նմանութիւն չունի : Իր արտաքին երևոյթը շատ մեծղի է . մերթը թխագոյն ու գրեթէ առանց մազի, պոչը մազի փունջով մը կը վերջանայ . պզտիկ աչուրներ ունի, բայց վառվռուն ու շատ զգայուն, թէպէտ շատ սրատես չեն . պատճին երկու կողմէն երկու ժանիք դուրս ցրցուած են և շատ մեծ յարգ ունին իրենց մաքուր սպիտակութեամբ . ականջներն ու ռնգուկներ խիստ զգայուն են, և նուազարանաց ներդաշնակութեան շատ ախորժ կ'առնէ . սրունքները կլոր ու հաստկեկ և ոտուրները հինգ հինգ մատ բաժնուած են . և որչափ որ ալ մեծամարմին և ծանր է, այնչափ ալ արագ է իր ընթացքը, մանաւանդ հարթ տեղուանք . սովորական քալուածքը՝ ձիու քալուածք է, իսկ բարկութեան ժամանակը չափէ դուրս արագ կ'ընթանայ : Եւս ծիծերը կուրծքին վրայ առջևի ոտուրներուն մէջտեղն է : Փղին նոր ձագը 35 բթաչափ բարձրութիւն ունի, և մինչև տասներինը ու քսանըջորս տարի կը մեծնայ : Բայց իր վրայ երևցող զարմանալի գործարանը, որ զինքը աւելի կը զատէ ուրիշ կենդանիներէն, իր պատիճն է, որ իրեն թէ հոտոտելեաց, թէ լսելեաց և թէ շօշափելեաց տեղ կը ծառայեցնէ : Եւս պատիճը մկանունքներէ, ջղերէ և մաշկէ կը բաղկանայ ու ծայրը շրթանց կը նմանի . և ինքը ուղածին պէս կրնայ զասիկայ երկնցնել, կարճեցնել, կլորել : Պատիճը փղին վրայ նոր անդամ մը չէ, այլ վերին շրթանց և